ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1957 Թ. ՄԱՐՏԻ 25-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստում լսվեց Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ պ. Գ. Քեհյայանի զեկուցումը Մայր Աթոռի, ներքին թեմերի և առանձին եկեղեցիների 1956 թվականի տարեկան հաշվետվությունների և 1957 թվականի նախահաշիվների հաստատման մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշում ընդունեց «Էջմիածին» ամսագրի ապրիլի համարում հրատարակել Մայր Աթոռի 1956 թվականի հաշվետվությունը և 1957 թվականի հախահաշիվը։

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում լսվեց Վեհափառ Հայրապետի հաղորդումը Ս. Երուսաղեմի պատրիարքական ընտրության մասին։ Մարտի 20-ին, Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի հանդիսությանց դահլիճում գումարված Սրբոց Հակոբյանց միաբանության պատվաբեր ժողովը Ս. Երուսաղեմի հայոց Պատրիարք է ընտրել Տեղապահ ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը խորունկ գոհունակությամբ արձանագրեց ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի պատրիարքական ընտրությունը և խնդրեց Վեհափառ Հայրապետից հայրապետական հատուկ կոնդակ հղել Տ. Տիրան արքեպիսկոպոսի պատրիարքական ընտրությունը հաստատելու համար։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը ի գիտություն ընդունեց նաև Երուսաղեմի հայոց վանքի միաբանական ժողովի որոշումը, Տ. Եղիշե արքեպիսկոպոսին միաբանության շարքերից վտարելու առնչությամբ։

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստի որոշմամբ, Երևանի Ս. Սարգիս եկեղեցու քահանա Տ. Իգնատիոս Մովսիսյանին նշանակվեց կենսաթոշակ՝ ծերության համար։

1957 Թ. ԱՊՐԻԼԻ 12-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր սույն նիստում քննության առավ Երուսաղեմի Հայոց Սրբոց Հակոբյանց վանքի միաբանական ընդհանուր ժողովի որոշումը՝ Եղիշե արքեպիսկոպոսին միաբանության շարքերից արտաքսելու մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը մի անգամ ևս հանգամանորեն քննելով Տերտերյան արքեպիսկոպոսի հարցը, դատապարտելի է գտնում նրա արարքները և խնդրում է վեհափառ Հայրապետից՝

1) Հաստատել Եղիշե արքեպիսկոպոսի նկատմամբ միաբանական ընդհանուր ժողովի կողմից կայացված բոլոր որոշումները.

2) Եթե առնել նրանից արքության պատիվը.

3) Կախակալել նրան փիլոնաղոկերով.

4) Նրա հարցը՝ ներկայացնել առաջիկա Եպիսկոպոսական ժողովին, վերջնական որոշում ընդունելու համար.

5) Մինչև Եպիսկոպոսական ժողովի գումարումը և նրա մասին վերջնական վճռի կայացումը, Տերտերյան սրբազանի համար պարտադիր բնակավայր սահմանել Բեթղեհեմի հայոց Ս. Ծննդյան վանքը, սկսած 1957 թվականի մայիսի 1-ից։

6) Եվ եթե մինչև Եպիսկոպոսական ժողովի գումարումը Եղիշե եպիսկոպոսը իր որևէ մեկ ձեռնարկով անտեսի վերոհիշյալ որոշումները և շարունակի վնաս հասցնել Հայ Եկեղեցուն և Երուսաղեմի Աթոռին, խնդրել Ամենայն Հայոց Կաթողիկոսից՝ տնօրինելու պարտ ու պատշաճը՝ վերջնական վճիռ կայացնելով նրա նկատմամբ։